



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13 , Ֆաքս (+374 223) 2 36 63, Էլ.փոստ kotayk@mta.gov.am

20.09.2013 N _____

Շ Ն Ո Ր Հ Ա Վ Ո Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Ղ Ե Ր Ձ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հարգելի՛ հայրենակիցներ

Կուրայքի մարզի հարգարժա՛ն քնակիչներ

Սեպտեմբերի 21-ի կարևորագույն, բացառիկ ու նշանակալի խորհուրդը կրկին համակել է բոլորիս և ստեղծել միայն իրեն բնորոշ տոնական մի տրամադրություն, որն ամեն տարի այս նույն ժամանակահատվածում դառնում է հայ մարդու ինքնատիպ ուղեկիցը:

Հայաստանի Հանրապետության Անկախության տոնի առիթով և անսահման ջերմությամբ շնորհավորում եմ բոլորիս ու մաղթում, որ 22 տարի առաջ այլևս իրականություն դարձած մեր դարավոր բաղձանքն իր մշտաբերուն ու հաղթական երթը շարունակի բոլոր ժամանակներում:

Անկախությունը մեծագույն ձեռքբերում է՝ մեր ժողովրդի մաքառումների արդյունք, որի պահպանումը բոլորիս ամենատարբ ու նվիրական պարտականությունն է:

Հայ ժողովրդի նորօրյա պատմության ոսկետառ էջերում իր հաստատուն ներկայությունն ունեցող այս առանցքային տոնի առիթով հնչող համատարած շնորհավորանքներին զուգահեռ պետք է վստահաբար բարձրաձայնենք, որ անկախության բերկրանքն ու ոգևորությունը մշտապես թևածում է հերոսական հայ ժողովրդի հոգում՝ դառնալով մերօրյա հաղթանակների լավագույն նախապայմանը:

Այս խորհախորհուրդ օրվա շրջանակներում պետք է փառաբանենք նաև անկախության ճանապարհը կերտող մեր քաջարի տղաներին ու միասնաբար փաստենք հայրենի պետականության հանդեպ մեր ունեցած անվերապահ նվիրումը:

Հարգանքներով

Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ